ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«28» փետրվարի 2019 թվականի N:31-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2019 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հանձնարարել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի նախագահին՝

հնարավոր հեղեղավտանգ ժամանակահատվածում պատրաստականության բերել մարզային տարահանման հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում հեղեղավտանգ տարածքներից անվտանգ տարածք բնակչության, կենդանիների, նյութական միջոցների տարահանման և տեղաբաշխման միջոցառումները կազմակերպելու համար.

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին՝

ա. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի հետ համատեղ մշակել մարզի տարածքում 2019 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների ծրագիր և այն մինչև 2019

թվականի մարտի 15-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի հաստատմանը,

բ. հեղեղումների դեպքում, տուժած տարածքներում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում գործող զանգվածային լրատվական միջոցներով պարբերաբար իրազեկել բնակչությանը սպառնացող վտանգների և ձեռնարկվելիք միջոցառումների մասին.

3) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության Ախուրյանի գետավազանի ջրաբանական կայանի պետին՝

ապահովել ջրաչափական դիտակետերից ստացված տեղեկատվության վերլուծումը և ժամանակին այն հաղորդել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչություն, ամեն օր՝ ժամը 08:00-ին և 20:00-ին, իսկ իրավիճակի վատթարացման դեպքում՝ անհապաղ.

4) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության Գյումրու, Արթիկի, Աշոցքի, Ամասիայի օդերևութաբանական կայանների պետերին՝

ապահովել օդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության վերլուծումը և ժամանակին այն հաղորդել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչություն, ամեն օր՝ ժամը 08:00-ին և 20:00-ին, իսկ իրավիճակի վատթարացման դեպքում՝ անհապաղ.

5) Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի՝ Մանթաշի, Թավշուտի, Արփիի, Կառնուտի, Սառնաղբյուրի, Վարդաքարի ջրամբարների պատասխանատուներին և «Շիրակ» ջրօգտագործողների ընկերության գործադիր տնօրենին՝

ա. հեղեղավտանգ ժամանակահատվածում ուժեղացնել հսկողությունը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում գտնվող ջրամբարների և ջրանցքների հիդրոլոգիական ռեժիմների նկատմամբ և այդ մասին տրամադրել տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչություն, ամեն օր՝ ժամը 08:00-ին և 20:00-ին, իսկ իրավիճակի վատթարացման դեպքում՝ անհապաղ,

բ. նշված ժամանակահատվածում ջրամբարներից հարկադրված ջրթողման դեպքում նախօրոք տեղեկացնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը.

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝

հեղեղավտանգ ժամանակահատվածում պատրաստի վիճակի բերել բժշկական ծառայության ուժերն ու միջոցները, անհրաժեշտության դեպքում տուժածների բժշկական սպասարկումն իրականացնելու համար.

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետին՝

ա. ճշտել և պատրաստի վիճակի բերել մարզում առկա ինժեներական տեխնիկան, անհրաժեշտության դեպքում տուժած տարածքներում փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումն ապահովելու համար,

բ. նախապատրաստել համապատասխան քանակի տրանսպորտային միջոցներ, անհրաժեշտության դեպքում վտանգավոր տարածքներից դեպի անվտանգ տարածք մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների տեղափոխման ու տեղաբաշխման նպատակով:

2. Առաջարկել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքների ղեկավարներին՝

ա. 2019 թվականի ընթացքում գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների վերաբերյալ ընդունել համապատասխան որոշում,

բ. պատրաստի վիճակի բերել համայնքային քաղաքացիական պաշտպանության կազմավորումները և արագ արձագանքման փրկարարական խմբերը, անհրաժեշտության դեպքում փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներն օպերատիվ իրականացնելու համար,

գ. կազմել համայնքի տարածքում գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների պլան և ապահովել նախատեսված միջոցառումների ժամանակին կատարումը,

դ. կատարված աշխատանքների վերաբերյալ տրամադրել տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը՝ սկսած 2019 թվականի մարտի 10-ից, յուրաքանչյուր 10 օրը մեկ անգամ.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղի տնօրենին՝

հեղեղավտանգ ժամանակահատվածում համապատասխան պատրաստականության բերել ծառայության վթարավերականգնողական կազմավորումները, անհրաժեշտության դեպքում էլեկտրական ուղիների վթարային անջատումներ և վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար.

3) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Շիրակի գազամատակարարման և գազիֆիկացման մասնաճյուղի տնօրենին՝

հեղեղավտանգ ժամանակահատվածում համապատասխան պատրաստականության բերել ծառայության գազավթարավերականգնողական կազմավորումները, անհրաժեշտության դեպքում գազամատակարարման ցանցի վթարային անջատումներ և վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար.

4) «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Արևմուտք» տարածաշրջանի տնօրենության «Շիրակ» տեղամասի գլխավոր ճարտարագետին՝

հեղեղավտանգ ժամանակահատվածում համապատասխան պատրաստականության բերել ծառայության վթարավերականգնողական կազմավորումները, անհրաժեշտության դեպքում ջրամատակարարման վթարային անջատումներ և ջրահեռացման ցանցի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է